

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

Հայաստանի Հանրապետության 2002 թվականի
պետական բյուջեն

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

Երևան 2002

Բովանդակություն

| | |
|---|----|
| Երկտող ընթերցողին | 3 |
| 1. Ի՞նչ է բյուջեն | 4 |
| 2. Հայաստանի Հանրապետության սոցիալ –տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2002-2004 թվականների համար | 5 |
| 3. Որտեղի՞ց են գոյանում բյուջետային մուտքերը և ու՞ր են դրանք ուղղվում | 12 |
| Եկամուտներ | 14 |
| Ծախսեր | 15 |
| 4. Բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը | 19 |
| 5. Ի՞նչ է բյուջետային գործընթացը | 22 |
| ՀՀ պետական բյուջեի նախագիծը | 22 |
| Պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը Ազգային Ժողովի կողմից | 24 |
| Բյուջեի կատարման վերահսկումը | 25 |
| Մասնագիտական տերմիններ | 26 |

Երկտող ընթերցողին

Ընթացիկ տարի Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան բյուջեներից կծախսվի 302.3 մլրդ դրամ: Ամեն մի քաղաքացու հաշվով այն կկազմի մոտ 100 հազար դրամ: Այդ գումարի հիմնական մասը գոյանում է քաղաքացիների և ձեռնարկությունների կողմից համապատասխան բյուջեներ մուծվող հարկերից և այլ պարտադիր վճարումներից:

Բյուջեներում կուտակված գումարները ծախսում են տարբեր նպատակների համար, օրինակ, մեծ ծրագրերի՝ ինչպիսին է հանրակրթական դպրոցների պահպանումը, նաև փոքր և համեմատաբար քիչ հայտնի գործարքների՝ ինչպիսին է ավտոմեքենաների համար պետական համարանիշերի սալիկների գնումը:

Պետական և համայնքային բյուջեների, ինչպես նաև սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի հանրագումարը կազմում է Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն:

Ինչքանով էք Դուք տեղյակ ՀՀ համախմբված բյուջեի մեջ ընդգրկված բյուջեներից և մասնավորապես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից: Եթե Ձեր պատասխանն է “ոչ չատ”, ապա Դուք միայնակ չեք:

Մենք գիտենք, որ Դուք մտահոգված եք նրանով, թե ինչպես են ծախսվում բյուջետային ռեսուրսները: Այդ պատճառով է պատրաստվել տվյալ ուղեցույցը: Հուսով ենք, որ տվյալ փաստաթուղթը ավելի հասանելի և հասկանալի կդարձնի բյուջեն ամենին, ով կընթերցի այն:

Այս ուղեցույցը հնարավորություն կտա Ձեզ կատարել կարճ ուղեպտույտ ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի էջերով: Այս էջերում մենք կներկայացնենք, թե որքան ռեսուրսներ է հավաքագրում և ծախսում ՀՀ կառավարությունը, ինչ գումարներ է Հայաստանի Հանրապետությունը պարտք այլ երկրներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես և ում կողմից է կազմվում, հաստատվում և կատարվում ՀՀ պետական բյուջեն:

Այս էջերին ծանոթանալուց հետո հուսով ենք իզուր չեք համարի ժամանակը և ուշադրությունը, որ նվիրեցիք այս ուղեցույցին և ավելի լավ պատկերացում կունենաք թե ինչ է իրենից ներկայացնում պետության բյուջեն:

1. Ի՞նչ է բյուջեն

Բյուջեն՝ դա որոշակի ժամանակաընթացի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ է: Բյուջեն շատ բան է պարունակում իր մեջ:

Բյուջեում արտացոլվում է.

- թե ինչպե՞ս են պետական (կենտրոնական) կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները հայթհայթում աղբյուրներ իրենց գործունեությունը ֆինանսավորելու համար: Որքա՞ն գումար է հավաքագրվելու տարբեր տեսակի հարկերից, օրինակ, ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), շահութահարկից, եկամտահարկից, ակցիզային հարկից և եկամուտի այլ աղբյուրներից:

- թե ինչպե՞ս պետական (կենտրոնական) կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ծախսեն հավաքագրված գումարները: Ո՞ր ոլորտները պետք է ֆինանսավորվեն: Ինչքա՞ն գումար պետք է հատկացվի պաշտպանության, միջավայրի պահպանության, սոցիալական ծառայությունների, կրթության և այլ ծրագրերին:

- պետության կողմից փոխառու միջոցների ներգրավման և պետական պարտքի մարման քաղաքականությունը: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա կառավարությունը ստիպված է պարտք վերցնել՝ քաղաքացիներին մատուցած ծառայությունների համար վճարելու և պետական պարտքը սպասարկելու համար:

Պետական բյուջեն՝


- ազդում է պետության տնտեսության վրա: Որոշ տեսակի ծախսեր, օրինակ, կրթության, գիտության և նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման գծով ծախսերը հավանորեն կբարձրացնեն արտադրողականությունը և քաղաքացիների եկամուտները ապագայում: Հարկերը, մյուս կողմից, նվազեցնում են քաղաքացիների եկամուտները և ավելի քիչ գումար թողնում իրենց ծախսերի համար:

- զգալիորեն փոխվում է կախված երկրի տնտեսության վիճակից: Տնտեսական աճի պայմաններում ավելի շատ մարդ է ապահովված աշխատանքով և եկամուտներն էլ բարձր են: Կառավարությունը կարող է ֆինանսավորել ավելի շատ թվով ծրագրեր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների փոխառության անհրաժեշտությունը կնվազի:

- պատմական գրանցումների և ապագա ռազմավարությանը առնչվող փաստաթուղթ է: Պետական բյուջեն պարունակում է տեղեկություններ այն մասին, թե ինչպես է կառավարությունը հավաքագրել և ծախսել ռեսուրսները նախորդ ֆինանսական տարիների ընթացքում և ինչպես է այն առաջարկում հավաքագրել և ծախսել ապագայում:

Դիագրամ 1-1 -ից երևում է, որ 2002 թվականին ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը կկազմեն ազգային տնտեսությունում ստեղծվելիք համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մոտ մեկ քառորդը:

Դիագրամ 1-1. ՀՀ համախմբված բյուջեի ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)



Ինչպես արդեն նշվեց, ՀՀ համախմբված բյուջեն կազմված է պետական և համայնքների բյուջեներից, և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեից: Այս երեքը միասին ընթացիկ տարում կկազմեն 302.3 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 23.5%-ը (պետական բյուջեի բաժինը կկազմի 19.5%, տեղական բյուջեների բաժինը՝ 1.6% և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամինը՝ 2.4%):


Այժմ դիտարկենք Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի որոշ մանրամասներ:

2. Հայաստանի Հանրապետության սոցիալ – տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2002-2004 թվականների համար

Անցած տասը տարիները Հայաստանի Հանրապետության համար բեկումնային եղան նոր տնտեսակարգի կերտման տեսանկյունից: Անցած 7 տարիների ընթացքում Հայաստանն անցել է միջին տարեկան 5.4% աճով, ինչն անցումային տնտեսություն ունեցող երկրների համար բավականին բարձր ցուցանիշ է: Պետք է նշել, որ եթե 1993 թվականին ՀՆԱ-ն կազմում էր 1990 թվականի մակարդակի շուրջ 47%, ապա 2001 թվականին այն կազմեց 74.7% և նույնիսկ տնտեսական աճի համեստ կանխատեսումների պայմաններում 2006 թվականին կգերազանցի ՀՆԱ-ի

1990 թվականի մակարդակը: Իրական համախառն ներքին արդյունքի դինամիկան ըստ տարիների բերված է 2-1 դիագրամում:

Դիագրամ 2-1. Իրական համախառն ներքին արդյունք



Բնակչության բարեկեցությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը, 1990 թվականի 1590 ԱՄՆ դոլարի փոխարեն 1994 թվականին նվազեց մինչև 270 ԱՄՆ դոլար, իսկ հետագա տարիների ընթացքում աճեց և 2001 թվականի վերջին կազմեց 556.8 ԱՄՆ դոլար: Մեր գնահատականներով 2004 թվականին այդ ցուցանիշը կկազմի 674.1 ԱՄՆ դոլար:

Սակայն, տնտեսական աճի բնագավառում նկատված ձեռքբերումները դեռևս բավարար չեն հանրապետությունում սոցիալական խնդիրները հիմնովին կարգավորելու համար: Աղքատությունը Հայաստանի Հանրապետությունում հասել է աղետալի մակարդակի և խիստ հրատապ է դրա հաղթահարման հիմնախնդիրը: Համաձայն 1998-99 թվականներին հանրապետությունում կատարած ուսումնասիրության, բնակչության այն մասը, որի մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության ընդհանուր գծից կազմում է ընդհանուրի 55%-ը: Այն անձինք, որոնց սպառումը գտնվում է աղքատության գծից փոքր-ինչ բարձր, կազմում են բնակչության շուրջ 13.5%-ը: Այսինքն, սոցիալական պաշտպանության կարիք ունեցողները կազմում են հանրապետության ողջ բնակչության ավելի քան երկու երրորդը (շուրջ 68.5%), որը անհամեմատ բարձր է անցումային տնտեսությամբ երկրներում աղքատության միջին մակարդակից (31%):

Այս իրավիճակի հաղթահարման համար անհրաժեշտ է աղքատության կրճատման խնդրի համակողմանի հետազոտությունը, նախապատրաստումը, ծրագրավորումը և իրականացումը մեր երկրի պայմանների ու առանձնահատկությունների հաշվառումով:

Կառավարությունը արդեն ձեռնամուխ է եղել խնդրի լուծմանը: Մշակվել և հավանության է արժանացել աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի միջանկյալ տարբերակը, ընթացքի մեջ են ավարտուն ծրագրի մշակման աշխատանքները, որը հիմք կդառնա հանրապետությունում աղքատության նվազեցմանը նպատակաուղղված գործունեության և կոնկրետ ծրագիր-միջոցառումների իրականացման համար:

Տնտեսական աճ. 2000 և 2001 թվականների ընթացքում Հայաստանի տնտեսությունում շարունակվեցին 1994 թվականից սկսված կայուն տնտեսական աճի միտումները: 2000 թվականին մեր հանրապետությունում համախառն ներքին արդյունքը հասավ 1989 թվականի մակարդակի 66%-ին, մինչդեռ ԱՊՀ երկրների համար համապատասխան միջինացված ցուցանիշը կազմում էր 60.1%: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը 1991-1993 թվականներին ունեցել է ամենախորը տնտեսական անկումը:

2001 թվականն աչքի ընկավ աննախադեպ բարձր տնտեսական աճի ցուցանիշներով: 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՀՆԱ-ի 9.6% իրական աճ, ինչը 4.6 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա նույն ցուցանիշից:

2002 թվականին կառավարությունը ծրագրավորում է ՀՆԱ-ի 6.0% իրական աճ, ինչն էլ դրվել է բյուջետային ցուցանիշների հաշվարկման հիմքում: 2003-2004 թվականների համար կառավարությունը կանխատեսում է նույնպես միջինում 6% տարեկան աճ: Բնականաբար, աճի նման ցուցանիշների ապահովումը ենթադրում է որոշակի նախադրյալների առկայություն, որոնցից կարևորագույնը ներդրումներն են, որոնց տեսակարար կշիռն ըստ կանխատեսումների կկազմի ՀՆԱ-ի մոտ 20%-ը:

2001 թվականի ընթացքում շնորհիվ Կենտրոնական բանկի վարած քաղաքականության սղաճի ծրագրային 3.5% մակարդակը ապահովվեց, իսկ 2002 թվականի, այնպես էլ հաջորդ երկու տարիների համար սղաճի ծրագրային մակարդակը կանխատեսվում է 3.0%-ի չափով:

Հարկային քաղաքականություն և վարչարարություն. 2002 թվականի ընթացքում առանձնահատուկ նշանակություն կունենան հատկապես պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում զարգացումները:

1994-2001 թվականներին, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները հիմնականում ապահովվել են հարկերի և պետական տուրքերի (ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտահարկի, մաքսատուրքի և պետական տուրքի) հաշվին:


Եթե 1994 թվականին հարկային եկամուտներ և տուրքեր ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր 11.2%, ապա 2000 թվականին այդ ցուցանիշը կազմեց 14.8%, իսկ 2001 ծրագրային ցուցանիշը կազմում է 14.3%:

Հարկերին վերաբերող 1997 թվականի օրենսդրական փոփոխությունները զգալիորեն փոխեցին ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային զամբյուղում: Անուղղակի հարկերը դարձան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը: Եթե նշված հարկատեսակներից մուտքերը 1994 թվականին կազմում էին հարկային եկամուտների և տուրքերի ընդհանուր գումարի 27.7%-ը, ապա 2000 թվականին դրանք կազմել են 60.9%:

Հարկային եկամուտներ և տուրքեր ցուցանիշի նման կառուցվածքը կշարունակի պահպանվել նաև առաջիկա երեք տարիներին և անուղղակի հարկերը կունենան անհամեմատ ավելի մեծ կշիռ, քան ուղղակի (եկամտային) հարկերը:

Դիագրամ 2-2 -ում ներկայացված է հարկերի և պետական տուրքի հավաքագրում/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան վերջին 8 տարիների ընթացքում: Անհրաժեշտ է նշել, որ այս ցուցանիշը զարգացած երկրներում կարող է հասնել 25-30%-ի:


Դիագրամ 2-2. Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ (%)



Վճարային հաշվեկշիռ. Ապրանքների արտահանումը 2001 թվականի ընթացքում կազմել է 342.8 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել արտահանման ծավալների 14.1% աճ: Նույն ժամանակահատվածում ներմուծման ընդհանուր ծավալը նվազել է 1.2%-ով և կազմել է 874.3 մլն դոլար: Շարունակվում է տեղական արտադրության ապրանքներով ներմուծման փոխարինման գործընթացը՝ հատկապես սննդի և լայն սպառման ապրանքների արտադրության գծով:

2002 թվականին նախատեսվում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատում ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ աճի շնորհիվ: Դիագրամ 2-3 –ում ներկայացված է արտաքին առևտրի և ընթացիկ հաշվի դինամիկան 1995-2004 թվականներին:

Դիագրամ 2-3. Արտաքին առևտրի և ընթացիկ հաշվի դինամիկան 1995-2004 թվականներին



Արտաքին պարտք. Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական բյուջեի պակասուրդի աստիճանական նվազեցման քաղաքականությունը ենթադրում է նաև պակասուրդի ֆինանսավորման արտաքին հոսքերի ծավալների նվազեցում: Արտաքին պարտքի սպասարկման առումով առավել ծանր ժամանակաշրջան կլինեն 2001-2007 թվականները, և այդ իմաստով անհրաժեշտ է, որ ներգրավվող նոր վարկերը նշված ժամանակահատվածում կրեն սպասարկման առավել մեղմ պայմաններ: Վերոհիշյալ դրույթը ենթադրում է նոր վարկերի ներգրավում առավելապես միջազգային ֆինանսական այնպիսի կազմակերպություններից, որոնք արտոնյալ վարկեր են տրամադրում վարկառու երկրների տնտեսական զարգացմանն աջակցելու նպատակով: Ստորև բերված են արտաքին պարտքի փաստացի ցուցանիշները 2000 և 2001 թվականների, ինչպես նաև կանխատեսումային ցուցանիշները 2002-2004 թվականների համար:

Աղյուսակ 2-1. Արտաքին պարտք

(մլն ԱՄՆ դոլարով)

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|-------|-------|--------|--------|--------|
| Արտաքին պետական պարտք | 859.5 | 905.4 | 1026.6 | 1106.9 | 1088.5 |
| այն թվում՝ | | | | | |
| 1. Կառավարության և Կենտրոնական բանկի երաշխիքներ | 19.2 | 27.8 | 24.4 | 6.9 | 4.6 |
| 2. Կենտրոնական բանկ | 175.4 | 172.4 | 189.1 | 217.6 | 186.8 |
| 3. Կառավարություն | 664.9 | 705.2 | 813.1 | 882.42 | 897.1 |

Ներքին պարտքի կառավարման գլխավոր ռազմավարական նպատակն է պարտքի էժանացումը, մարման ժամկետի երկարաձգումը և պետական արժեթղթերի շուկայի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդումը: Ստորև բերված

են ներքին պարտքի փաստացի ցուցանիշները 2001 թվականի, ինչպես նաև կանխատեսումային ցուցանիշները 2002-2004 թվականների համար:

Աղյուսակ 2-2. Ներքին պարտք

| Պետական արժեթղթեր | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|-------|------|------|------|
| Պետական պարտքի ծավալը (մլրդ դրամով) | 36.4 | 39.1 | 40.0 | 43.0 |
| Միջին եկամտաբերությունը, % | 20.05 | 20.0 | 19.0 | 18.0 |
| Թողարկման ժամկետայնությունը, օր | 287 | 350 | 370 | 390 |
| Պետական պարտքի սպասարկման (տոկոսավճար) ծախսեր (մլրդ դրամով) | 6.5 | 7.8 | 7.3 | 7.0 |
| Իրացումից ստացված զուտ հասույթը (մլրդ դրամով) | 5.9 | 3.5 | 2.5 | 3.0 |

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2-3-ում:
Աղյուսակ 2-3. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

| | 1999 փաստ. | 2000 փաստ. | 2001 փաստ. | 2002 ծրագ. | 2003 ծրագ. | 2004 ծրագ. |
|--|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 987.4 | 1033.3 | 1177.0 | 1285.3 | 1403.3 | 1532.1 |
| ՀՆԱ-ի իրական աճ (%) | 3.3 | 6.0 | 9.6 | 6.0 | 6.0 | 6.0 |
| Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար) | 1849.6 | 1905.2 | 2120.9 | 2283.0 | 2439.2 | 2578.9 |
| Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար) | 486.3 | 501.1 | 556.8 | 592.1 | 636.2 | 674.1 |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր (%) | 0.1 | -1.3 | 3.9 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Սղաճ (Ժ-շրջ-ի վերջ, %) | 2.0 | 0.4 | 2.9 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Սղաճ (միջին, %) | 0.6 | -0.8 | 3.1 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Փոխարժեք (դրամ/դոլար, միջին) | 535.1 | 539.5 | 555.1 | 567.8 | 580.3 | 599.2 |
| Փոխարժեք (դրամ/դոլար, Ժ-շրջ-ի վերջ) | 524.1 | 554.6 | 564.8 | 577.7 | 590.3 | 607.0 |
| Բյուջեի եկամուտներ և գրանտներ (մլրդ դրամ) ¹ | 190.9 | 172.2 | 193.4 | 219.2 | 241.5 | 267.8 |
| Բյուջեի եկամուտներ և գրանտներ/ՀՆԱ (%) | 19.3 | 16.7 | 16.4 | 17.5 | 17.6 | 17.9 |
| Բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ (%) | 16.1 | 14.8 | 14.3 | 15.5 | 15.9 | 16.3 |
| Բյուջեի ծախսեր և զուտ վարկավորում (մլրդ դրամ) | 242.6 | 195.2 | 239.8 | 260.1 | 282.6 | 305.2 |
| Բյուջեի ծախսեր և զուտ վարկավորում/ՀՆԱ (%) | 24.6 | 21.8 | 24.4 | 20.7 | 20.6 | 20.4 |
| Բյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ) | 40.7 | 31.2 | 38.6 | 39.7 | 39.1 | 24.1 |
| Բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ (%) | 4.1 | 3.0 | 3.3 | 3.2 | 2.9 | 1.6 |

| | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|--|--------|--------|--------|--------|--------|--------|
| | փաստ. | փաստ. | փաստ. | ծրագ. | ծրագ. | ծրագ. |
| Բյուջեի դեֆիցիտ (ներառած սեփ. միջ. զուտ օգտագործումը, մլրդ դրամ) | 51.7 | 52.8 | 46.2 | 41.0 | 41.1 | 37.4 |
| Բյուջեի դեֆիցիտ (ներառած սեփ. միջ. զուտ օգտագործումը/ՀՆԱ (%)) | 5.2 | 5.1 | 3.9 | 3.3 | 3.0 | 2.5 |
| Սեփ. միջ. զուտ օգտագործում | 10.9 | 21.5 | 7.6 | 1.3 | 2.0 | 13.3 |
| Ֆինանսական պահանջ ² (մլրդ դրամ) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | -11.5 | -3.7 |
| Ղեֆիցիտի ֆինանսավորում (մլրդ դրամ) | 51.7 | 52.8 | 46.2 | 41.0 | 29.6 | 33.7 |
| Սեփ. միջ. օգտագործում | 10.9 | 21.5 | 7.6 | 1.3 | 2.0 | 13.3 |
| Արտաքին ֆինանսավորում (զուտ) ³ | 46.3 | 22.5 | 27.5 | 36.6 | 25.1 | 17.4 |
| Արժեթղթեր ⁴ | 0.0 | 1.8 | 5.9 | 3.5 | 2.5 | 3.0 |
| ՀՀ կենտրոնական բանկ | -5.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ աղբյուրներ | 0.0 | 6.9 | 5.1 | -0.4 | 0.0 | 0.0 |
| Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար) | -474.0 | -463.5 | -412.9 | -473.5 | -448.1 | -406.8 |
| Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար) | -721.3 | -773.4 | -767.5 | -865.5 | -879.3 | -889.7 |
| Ապրանքների ներմուծում/ՀՆԱ (%) | -39.0 | -40.6 | -36.3 | -39.1 | -37.0 | -35.3 |
| Ապրանքների արտահանում (մլն ԱՄՆ դոլար) | 247.3 | 309.9 | 354.6 | 392.0 | 431.2 | 482.9 |
| Ապրանքների արտահանում/ՀՆԱ/(%) | 13.4 | 16.3 | 16.8 | 17.7 | 18.1 | 19.2 |
| Ընթացիկ հաշիվ (մլն ԱՄՆ դոլար) | -306.9 | -278.4 | -201.7 | -298.2 | -255.3 | -203.2 |
| Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (%) | -16.6 | -14.6 | -9.5 | -13.5 | -10.7 | -8.1 |
| Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (չներառած պաշտոնական տրանսֆերտները, %) | -21.7 | -19.9 | -12.6 | -16.4 | -13.5 | -10.6 |

¹ Համաձայն 2000 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության 2001 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի

² 2003-2004 թթ. համար նոր վարկային պայմանագրերի կնքման պահանջ

³ Ներառված են միայն կնքված պայմանագրերը


⁴ 1999 թ. ներառված է «Հայաստան» համահայկական հիմնադրամից ստացված փոխատվության մարումը, պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի ետ գնումը, ՀՀ առևտրային բանկերից զուտ ֆինանսավորումը և այլ ֆինանսավորում

3. Որտեղի՞ց են գոյանում բյուջետային մուտքերը և ու՞ր են դրանք ուղղվում

Սովորական ընտանիքում հաճախ է սեղանի շուրջ քննարկում ընտանիքի բյուջեն: Կարող են քննարկել, թե որքան է վաստակում ընտանիքը, որքան կարող է ծախսել սննդի, կոմունալ ծառայությունների, տրանսպորտի, հնարավոր է և արձակուրդային ուղեվորությունների, և որքան գումար կարող խնայել ապագա կարիքների համար:

Եթե ընտանիքի եկամուտները չեն բավարարում նախատեսված ծախսերը կատարելու համար, նրանք կարող են քննարկել, թե ինչպես կրճատել ծախսերը, օրինակ հագուստի, ճանապարհորդության և այլ բնագավառներում: Նրանք կարող են քննարկել մի այլ տարբերակ՝ ինչպես ավելի շատ վաստակել աշխատելով հավելյալ ժամեր, կամ անցնելով մի ուրիշ նոր աշխատանքի: Եթե նրանց կարծիքով դրամի պակասը ծամանակավոր է, նրանք կարող են պարտքով որոշակի գումար վերցնել, բայց միաժամանակ պետք է մտածեն, թե ինչպես են վերադարձնելու պարտքը: Մյուս կողմից, եթե ընտանիքի եկամուտները գերազանցում են սովորական ամենօրյա պահանջները, կարելի է բարելավել բնակարանային վիճակը, գնել մեքենա և այլն:

Նկար 3-1. Ընտանիքի բյուջեն



Աղբյուրը. սեփական եկամուտներ և փոխառված միջոցներ

Որոշ իմաստով կառավարությունը պլանավորում է իր բյուջեն այնպես, ինչպես այն արվում է ընտանիքում: Կառավարությունը և Ազգային ժողովը համատեղ որոշում են, թե որքան եկամուտներ կարելի է ակնկալել առաջիկա տարում, որտեղից այն կգոյանա, որքան կարելի է ծախսել տարբեր ծրագրերի վրա, ինչպիսին են օրինակ պաշտպանությունը, պետական կառավարումը, սոցիալական ապահովությունը, կրթությունը, տրանսպորտը և այլն:

Հետևյալ բաժնում մենք կքննարկենք այս խնդիրները ավելի մանրամասնորեն, այն է՝ ինչպես է կառավարությունը ստեղծում իր ֆինանսական ռեսուրսները, և ինչպես է այն ծախսում:

Նկար 3-2. ՀՀ պետական բյուջեի ծախսերի ուղղությունները



Կառավարություն



Ազգային ժողով

Աղբյուրը. սեփական բյուջետային եկամուտներ և փոխառություն


«Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները հաստատված են 219.2 մլրդ դրամի չափով, ծախսերը 260.1 մլրդ դրամի չափով, իսկ դեֆիցիտը կազմում է 41 մլրդ դրամ: Պետք է նշել, որ համեմատած նախորդ տարվա տվյալների հետ պետական բյուջեի դեֆիցիտը կնվազի 18%-ով: ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերությունը 2001 թվականին կազմեց 3.3%, իսկ 2002-ի համար այն ծրագրավորված է 3.2% մակարդակի վրա: ՀՀ 2002 թվակա-

նի պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորելու համար նախատեսվում է ներգրավել 101.0 ԱՄՆ դոլարի չափով վարկեր, որոնց հիմնական մասը՝ Համաշխարհային Բանկից:

Եկամուտներ

ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի ընթացիկ եկամուտները (հարկային եկամուտներ, պետական տուրք և ոչ հարկային եկամուտներ) հաստատված են 202.1 մլրդ դրամի չափով, որը գերազանցում է 2001 թվականի համանման տվյալներին 11.2 %-ով: Ընթացիկ եկամուտների ավելի քան 90%-ը գոյանում է հարկերի հավաքագրումից:

Դիագրամ N 3-3. Ընթացիկ եկամուտներ
202.1 մլրդ դրամ



Հարկեր և պետական տուրքեր

ՀՀ 2002 թվականի պետական բյուջեով հարկային եկամուտները և պետական տուրքերը ծրագրավորվել են 194.6 մլրդ դրամի կամ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների 112.3%-ի չափով: Ընդ որում, նշված 194.6 մլրդ դրամ գումարի կազմում 178.1 մլրդ դրամը ծրագրավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հավաքագրման նախորդ տարիների միտումների հիման վրա, իսկ մնացած 16.5 մլրդ դրամն ակնկալվում է ապահովել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման և հարկային օրենսդրությունում առաջարկվող փոփոխությունների ազդեցության հաշվին: Հաշվարկների ամփոփ պատկերը ներկայացված է Աղյուսակ 3-1-ում:

Աղյուսակ 3-1. Հարկեր և պետական տուրքեր


(մլրդ դրամով)

| Հարկատեսակը | 2002 թ. ծրագրավորված մուտքերը | | | |
|--|-------------------------------|--|----------|--|
| | ըստ հավաքագրման միտումների | ըստ վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների | Ընդամենը | Տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում (%) |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր, այդ թվում | 178.11 | 16.52 | 194.63 | 100 |
| ԱԱՀ | 86.35 | 5.61 | 91.96 | 47.0 |
| Ակցիզային հարկ | 30.95 | 1.80 | 32.75 | 16.8 |
| Շահութահարկ | 20.09 | 2.25 | 22.34 | 11.55 |
| Եկամտահարկ | 12.01 | 1.27 | 13.28 | 6.85 |
| Մաքսատուրք | 10.79 | 1.50 | 12.29 | 6.35 |
| Հաստատագր-ված վճարներ | 4.04 | 1.60 | 5.64 | 2.95 |
| Բնապահպանական և բնօգտագործման վճարներ | 1.98 | 0.23 | 2.21 | 1.15 |
| Պարզեցված հարկ | 2.51 | 0.57 | 3.08 | 1.65 |
| Այլ հարկային եկամուտներ | 0.07 | 0.01 | 0.08 | 0.05 |
| Պետական տուրք | 9.32 | 1.68 | 11.0 | 5.65 |

Ծախսեր

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ 2002 թվականին պետական բյուջեի ծախսերը կկազմեն 260.1 մլրդ դրամ, որից 1.3 մլրդ դրամ ծախսերը կատարվելու են պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից գոյացած միջոցների հաշվին (այդ միջոցները հիմնականում օգտագործվում են աղետի գոտում գտնվող օբյեկտների կապիտալ շինարարության համար): Առանց սեփականաշնորհման գումարների հաշվին կատարված ծախսերի պետական բյուջեի ծախսերը 2002 թվականին կկազմեն 258.8 մլրդ դրամ: Այդ ծախսերը դասվում են 14 խմբերի, ինչպես այն ցույց է տված Դիագրամ 3-4 – ում:

Դիագրամ 3–4. Պետական բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հիմնական խմբերի



- 01 Ընդհանուր բնույթի պետական ծառայություն
- 02 Պաշտպանություն
- 03 Հասարակական կարգի պահպանություն, ազգային անվտանգություն և դատական գործունեություն
- 04 Կրթություն և գիտություն
- 05 Առողջապահություն
- 06 Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն
- 07 Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն
- 08 Բնակարանային-կոմունալ տնտեսություն
- 09 Վառելիքային և էներգետիկ համալիր
- 10 Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն
- 11 Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն
- 12 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ
- 13 Տնտեսական այլ ծառայություններ
- 14 Հիմնական խմբին չդասվող ծախսեր

- Ուժային համակարգի ծախսերը (պաշտպանություն, ազգային անվտանգություն և այլն) կկազմեն 54.1 մլրդ դրամ, կամ բյուջեի 20.8%-ը:
 - Ծախսերը սոցիալական ոլորտի ծրագրերի վրա, որոնք ներառում են առողջապահությունը, կրթությունը, մշակույթը և այլ բնագավառները կազմում են 79.14 մլրդ դրամ, կամ բյուջեի 30.6%-ը:
 - Ծախսերը լայն սպեկտրի տնտեսական ծրագրերի վրա, որոնք ընդգրկում են տրանսպորտը, գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, էներգետիկ համալիրը և այլ բնագավառները կազմում են 55.25 մլրդ դրամ, կամ բյուջեի 21.3%-ը:
 - Պետական պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարները), որոնք ներառված են 14 -երրորդ խմբում (հիմնական խմբին չդասվող ծախսեր) կազմում են 15.8 մլրդ դրամ, կամ բյուջեի 6.1%-ը:

Ավելի մոտից ծանոթանանք բյուջեի սոցիալական և տնտեսական բնագավառի մի քանի ծրագրերին:

Կրթության բնագավառում շարունակվելու են բարեփոխումները, որոնք նախատեսված են ըստ ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրի: Բարեփոխումները ուղղված են համակարգի տարբեր մակարդակների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կազմակերպահրավական տեսակի հստակեցմանը, համակարգի կառավարման ձևի և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը:

Հանրակրթության կառուցվածքը և բովանդակությունը շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև միջազգային կրթական հանրությանն ինտեգրացվելու անհրաժեշտությունը թելադրում է անցում 10-ամյա դպրոցից 11-ամյայի: Սկսած 2001-2002 ուսումնական տարվանից անցում է կատարվել 11-ամյա միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությանը, որի հետ կապված՝ առաջանում է հանրակրթության չափորոշիչների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և դասագրքերի վերափոխման անհրաժեշտություն:

Բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում պահպանվելու է տնտեսության առանձին բնագավառների զարգացման, հիմնարար գիտությունների ու հայագիտության գծով մասնագետների պատրաստումը:

Նախատեսվում է 2002 թվականին մանկավարժական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձի բարձրացում՝ 20%-ի չափով:

Առողջապահության ոլորտում կշարունակվեն համակարգի բարեփոխումները և օպտիմալացման գործընթացը: Ներկայումս առողջապահության բնագավառում առաջնային խնդիր է համարվում օրենսդրական դաշտի բարելավումը, հանրապետության առողջապահության ազգային քաղաքականության մշակումը, 2002 թվականին “Առողջապահության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը: Առողջապահության համակարգի 2002 թվականի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և ծառայությունների փաթեթի հիմքում դրվել են բուժօգնության մատչելիության, հավասարության, սպասարկման որակի, արդարության ապահովման սկզբունքները:

Բնակչության բժշկական օգնության հետ կապված խնդիրների շուրջ 70%-ը առնչվում է առողջության առաջնային պահպանման օղակին: Այդ իսկ առումով առողջության առաջնային պահպանումը և դրա իրականացման կարևորագույն օղակ հանդիսացող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի զարգացումը համարվել է կարևորագույն գերակայություն առողջապահության բնագավառում: 2002 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերը ընդգրկում են բնակչությանն ամբողջապես պետության կողմից երաշխավորված անվճար ծառայությունների շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, հակատուբերկուլոզային, ինֆեկցիոն, էնդոկրին, ուռուցքաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական ծառայությունների կողմից բժշկական սուլտատիվ օգնությունը, իսկ սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց համար բոլոր մասնագետների գծով, ինչպես նաև լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը՝ առանց հաճախումների սահմանափակման:

Ըստ վիճակագրական տվյալների և փորձագիտական գնահատման, բնակչության 8-9%-ը տարեկան ստանում է հիվանդանոցային բուժօգնություն, որը 2002 թվականին կկազմի մոտավորապես 260000 դեպք: Պետական պատվերի շրջանակներում նախատեսվում է հիվանդանոցային պայմաններում ապահովել մոտավորապես 139600 դեպքի բուժման կազմակերպում՝ նախորդ տարվա 150000 հիվանդանոցային դեպքի փոխարեն:

Երկարաժամկետ քաղաքականության առումով՝ 2002 թվականին շարունակական ներդրման մեջ կլինի ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանա-

բար, փոխարինելու է ներկայիս համեմատաբար ուռճացված ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգին: Ընտանեկան բժշկության համակարգի ձևավորմանը զուգընթաց ներկայիս խոշոր պոլիկլինիկաների մի մասը վերածվելու են հիվանդանոցային բուժփնիմարկների հետ սերտորեն փոխկապակցված կոնսուլտացիոն-ախտորոշիչ տարածքային կենտրոնների:

Սոցիալական ապահովության բնագավառի համար ՀՀ 2002 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերը նպատակաուղղված են բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը: Բնագավառի համար նախատեսված ծախսերի գերակշռող մասը կազմում են աղքատության ընտանեկան նպաստներին ուղղվող միջոցները: Դրանց վճարման համար նախատեսվում է 14.85 մլրդ դրամ: Պետք է նշել, որ աղքատության ընտանեկան նպաստի համակարգը, հանդիսանալով սոցիալական պաշտպանության մինչև այժմ գործող համակարգերից առավել հասցեագրվածը, դեռևս կատարելագործման, ինչպես նաև անապահով ինտանիքների ընտրության չափանիշների հստակեցման և ճշգրտման կարիք ունի:

Տնտեսական բնագավառում առավել կարևոր ծրագրերը իրականացվելու են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին: Նշենք դրանցից մի քանիսը.

- Համայնքային զարգացման ծրագրի նպատակն է՝ Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը, ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետության և կառավարման կատարելագործումը, պետական բնակարանային շինարարության քաղաքականության բարեփոխումները:

- Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագրի նպատակն է՝ համայնքային մակարդակի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքի վերականգնման իրականացումը, համայնքային և տեղական կազմակերպություններին աջակցություն ցույց տալը՝ զարգացնելու իրենց մասնագիտական և վարչական ունակությունները ծրագրեր պատրաստելու և իրականացնելու ասպարեզում, նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Շինարարական բնագավառում նախատեսվում է Շիրակի և Լոռու մարզերում կառուցել թվով 17 կրթական հիմնարկ, վերակառուցել 1 հիվանդանոց, 2 ջրագիծ, 1 ջրմուղ-կոյուղու համակարգ և մի քանի այլ ծրագրեր:

- Պատվարների անվտանգության ծրագրի նպատակն է՝ ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնական ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը: Նախատեսվում է թվով 14 ջրամբարի պատվարների վերականգնում և 16 ջրամբարի պատվարների անվտանգության սարքավորումների ձեռքբերում և տեղադրում:

- Տրանսպորտի ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտի հուսալիության բարձրացումը՝ ներառյալ հիմնական ճանապարհացանցի բարելավումը, ճանապարհային անվտանգության ապահովումը, երկաթուղային ծառայությունների և Հայկական երկաթուղու դեպարտամենտի ֆինանսական և կառավարման աշխատանքների բարելավումը: Նախատեսվում է կատարել ճանապարհաշինարարական աշխատանքներ Կանաձոր-Ստեփանավան, Կապան-Քաջարան, Գյումրի-Բավրա և Սպիտակ -Գյումրի ուղղություններով ավելի քան 80 կմ ընդհանուր երկարությամբ: Ծրագրի շրջանակներում կատարվելու են մի շարք կամուրջների վերականգնման շինարարական աշխատանքներ:

- Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիրը նպատակ ունի աջակցելու մասնավոր ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող

ծեռնարկությունների զարգացմանը: Վարկավորման ընդհանուր ծավալը 2002 թվականի ընթացքում կկազմի մոտ 2 մլն ԱՄՆ դոլար:

- Լինսի հիմնադրամի վարկավորման ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում աջակցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը՝ վարկերի տրամադրման միջոցով: 2002 թվականի ընթացքում նախատեսվում է ձեռնարկություններին տրամադրել 2 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներ:

- Հանթսմանի հիմնադրամի հումանիտար բնակարանային և դպրոցների շինարարության ծրագրի նպատակն է կառուցել շուրջ 202 բնակարաններ և մեկ դպրոց երկրաշարժից տուժած անձանց և բնակարանի կարիք ունեցող ընտանիքների համար:

Այս ցանկը կարելի է ևս շարունակել, սակայն այսքանն էլ բավական է ընդհանուր գաղափար կազմելու համար ընթացող ծրագրերի մասին:

Բյուջետային համակարգի աշխատողների միջին աշխատավարձը և թիվը. 2002 թվականին բյուջետային հիմնարկների աշխատողների հաստիքային միավորների միջին թիվը 2001 թվականի ցուցանիշների համեմատությամբ կնվազի 5%-ով, իսկ բյուջետային հիմնարկների աշխատողների մեկ հաստիքային միավորի միջին ամսական աշխատավարձը կկազմի 15000 դրամ, որը 2001 թվականի ցուցանիշի համեմատությամբ կավելանա 23.8%-ով:

4. Բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը

Դեֆիցիտը (պակասուրդը) և հավելուրդը բյուջեի եկամուտների և ծախսերի փոխհարաբերության չափանիշներն են: Դեֆիցիտը այն մեծությունն է, որով ծախսերը գերազանցում են եկամուտներին, իսկ հավելուրդը ցույց է տալիս, թե ինչքանով են եկամուտները գերազանցում ծախսերին:

Այն միջոցները, որ կառավարությունը օգտագործում է իր ծախսերը կատարելու համար, այն է պետական բյուջեի եկամուտները, հիմնականում գոյանում են հարկերից: Անցած տասը տարիների ընթացքում կառավարության ստանձնած պարտավորությունները ավելին էին, քան եկամուտները, ինչը ստիպեց կառավարությանը ռեսուրսներ փոխառնել իր պարտավորությունները կատարելու համար և դրա արդյունքում գոյացավ պետական պարտքը: Եթե սեփական և փոխառված ռեսուրսները բավարար չեն լինի ծրագրավորված ծախսերը կատարելու համար, ապա կպահանջվի բյուջեի ծախսերի կրճատում:

Պետական պարտքը իրենից ներկայացնում է Կառավարության և Կենտրոնական Բանկի պարտավորությունների ընդհանուր գումարը, այդ թվում նաև պարտավորություններ, որոնք գոյանում են տրված երաշխիքներից, տարբեր օրենսդրական ակտերի կիրառումից և պայմանագրերից:

2001 թվականին պետական ներքին պարտքի ռազմավարությամբ նախատեսվում էր խորացնել 2000 թվականին պետական պարտատոմսերի շուկայում նկատվող դրական միտումները և շարունակել իրագործել հետևյալ ծրագիրը.

1. ներքին պետական պարտքի էժանացում,
2. ներքին պետական պարտքի ժամկետայնության երկարացում,
3. պետական պարտատոմսերի շուկայի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդում ու շուկայի թափանցիկության ապահովում:

Նշված ծրագիրը ենթադրում էր մի շարք միջոցառումներ, որոնք թույլ տվեցին ոչ միայն հասնել այդ նպատակներին, այլև տարեվերջին ապահովել առավել բարենպաստ փաստացի ցուցանիշներ, քան դրանք և ծրագրավորվում էին տարեսկզբին: Այսպես, 2001 թվականին թողարկված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 20.94%` միջին ժամկետ ծրագրով նախատեսված 23%-ի փոխարեն: 2001 թվականին պետական պարտատոմսերի սպասարկմանն ուղղվել է 6.54 մլրդ դրամ` նախատեսված էր 8.79 մլրդ դրամ, ընդ որում այդ պայմաններում հաջողվեց բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 5.95 մլրդ դրամով` նախատեսված 4.5 մլրդ դրամի փոխարեն: 2001 թվականին թողարկված պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմեց 287 օր` ծրագրավորված 245 օրվա փոխարեն: Արդյունքում, շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի մարումների սցենարը դարձավ առավել հարթ (մարումների բաշխվածությունը կազմեց 3 տարի): Այն հնարավոր դարձավ ՀՀ պարտատոմսերի շուկայի համար աննախադեպ 2.5-3 տարի մարման ժամկետով պարտատոմսերի թողարկման շնորհիվ:

2001 թվականին պետական պարտատոմսերի նկատմամբ առաջնային շուկայում պահանջարկը կազմեց 106.9 մլրդ դրամ, որը 2.29 անգամ գերազանցեց առաջարկը: Պետական պարտատոմսերի շուկայի թափանցիկության աճը (հեռուստատեսությամբ “Պետական պարտատոմսեր” հաղորդաշարի, պարբերաբար թողարկվող պետական պարտքի վերաբերյալ հաշվետվությունների, Գանձապետական պահառու համակարգի աշխատանքի շնորհիվ) հնարավորություն ստեղծեց ներդրողների շրջանում բարձրացնել վստահությունը պետական պարտատոմսերի նկատմամբ և ներգրավել նոր ներդրումներ:

2002 թվականի սկզբին պետական ներքին պարտքը կազմում էր 36.4 մլրդ դրամ: 2002 թվականի ընթացքում պլանավորված է պետական պարտատոմսերով ֆինանսավորել բյուջեի դեֆիցիտը 3.5 մլրդ դրամով, սպասարկման ծախսերը կկազմեն 7.8 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները և տրամադրված արտաքին երաշխիքները) 2002 թվականի սկզբին կազմեց 905.4 մլն ԱՄՆ դոլար, որից 27.8 մլն ԱՄՆ դոլարը` ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստանձնած երաշխիքներն են: 2001 թվականի տարեսկզբի համեմատ ՀՀ արտաքին պարտքը աճել է 45.9 մլն ԱՄՆ դոլարով: 2001 թվականի ընթացքում արտաքին պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կազմել է 52.4 մլն ԱՄՆ դոլար: Այն ներառում է մայր գումարի մարումը և տոկոսավճարը: 2002 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով նախատեսվում է ստանալ մոտ 127.5 մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ (կառավարության բաժինը` 101 մլն ԱՄՆ դոլար) , նույն ժամանակաշրջանում սպասարկման ծախսերը կկազմեն 58.0 մլն ԱՄՆ դոլար` մարում և 18.1 մլն ԱՄՆ դոլար` տոկոսավճար:


Հիմնվելով Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վրա ՀՀ արտաքին պարտքի գուտ ներկա արժեքը (ՋՆԱ) 2002 թվականի սկզբին կազմել է 587 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ-ի 27.5%-ը և արտահանման 107%-ը: Այս ցուցանիշների գծով Հայաստանի Հանրապետությունը որակավորվում է որպես միջին պարտավորվածության երկիր: Հարկ է նշել, որ այս ցուցանիշները Հայաստանի Հանրապետության պայմաններում շարունակապես գտնվում են բավարար դիրքերում, ինչը պայմանավորված է արտաքին պետական պարտքի զամբյուղի արտոնյալության բարձր աստիճանով:

Վարկային պարտավորությունների միջին կշռված տոկոսադրույքը 2001 թվականին կկազմի 2.1% (օրինակ՝ կենտրոնական և արևելաեվրոպական երկրներում այն կազմում է մոտ 10%), և հիմնական պատճառն այն է, որ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների մոտ 78%-ն արտոնյալ պայմաններ ունեն: 2002-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի միջին կշռված տոկոսադրույքը չի գերազանցի 2.2%-ը:

ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը ներկայացված է դիագրամ 4-1 – ում:

Դիագրամ 4-1. ՀՀ 2002թ. պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները

Ընդհանուր դեֆիցիտը՝ 41.0 մլրդ. դրամ



5. Ի՞նչ է բյուջետային գործընթացը

ՀՀ պետական բյուջեի նախագիծը

Պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով: Պետական բյուջեի նախագծի մշակումը սկսվում է դրա Ազգային ժողով ներկայացնելուց ամիսներ առաջ: Բյուջետային գործընթացը, որի առաջին փուլը ներառում է բյուջեի նախագծի մշակումը, քննարկումը և հաստատումը, Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես սկսվում է ՀՀ վարչապետի՝ այդ գործընթացի առաջին փուլի աշխատանքների կազմակերպումն ապահովող որոշումով, ուր նշվում է պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների կատարման ժամանակացույցը և այդ աշխատանքները կատարողների պատասխանատվությունը: Վարչապետի որոշումը սովորաբար կայացվում է տարվա առաջին կեսին: Պետական բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման հիմնական փուլերը ներկայացված են 5-1 աղյուսակում:

Աղյուսակ 5-1. ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման հիմնական փուլերը

| Փուլեր | Պատասխանատու |
|--|--|
| Մշակել և պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմիններին տրամադրել համապատասխան ձյուղերի և մարզի (Երևան քաղաքի) զարգացման 2002 թվականի ծրագրերի նախագծերի կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| Մշակել և պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմիններին տրամադրել 2002 թվականի բյուջեների նախագծերը կազմելու համար անհրաժեշտ հաշվարկների կատարման մեթոդական ցուցումները, բյուջետային ֆինանսավորման հայտերի, բյուջետային հիմնարկի պահանջման ծախսերի նախահաշվի ձևերը և ներկայացման կարգը | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| Մշակել և պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմիններին տրամադրել պետական տուրքերի, ոչ հարկային եկամուտների և կապիտալի գործառնությունից եկամուտների գծով ՀՀ 2002-2004 թվականների պետական բյուջեների նախագծերում նախատեսման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվելիք եկամուտների կանխատեսումները | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը | ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ |

| | |
|---|--|
| 2002 թվականի պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հայտ ներկայացրած հայտատուների հետ համաձայնեցնել իրենց գծով բյուջեի նախագծում նախատեսվելիք ծախսերի ֆինանսավորման չափերը | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ |
| ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ կառավարության 2002 թվականի բյուջետային ուղերձի և ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծերը | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական խմբագրում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ |
| ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագիծը ներկայացվում է Ազգային ժողով | ՀՀ կառավարություն |
| ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկում Ազգային ժողովում (մշտական հանձնաժողովներում և լիազումար նիստում) | ՀՀ կառավարություն, Ազգային ժողով |
| ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի նախագծի բովանդակությունը խմբագրվում է հաշվի առնելով Ազգային ժողովում քննարկումների ժամանակ արտահայտված դիտողությունները | ՀՀ կառավարություն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ |
| Պետական բյուջեի մասին օրենքի ընդունում | Ազգային ժողով |

ՀՀ Ազգային ժողովը 2001 թվականի դեկտեմբերի 28-ին, Սահմանադրության 76-րդ հոդվածին համապատասխան ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատել է ՀՀ 2002 թվականի պետական բյուջեն : Եթե մինչև 2002 թվականի բյուջետային տարվա սկիզբը բյուջեն չհաստատվեր, ապա այդ դեպքում Սահմանադրության նույն հոդվածին համապատասխան՝ ծախսերը, մինչև պետական բյուջեի հաստատումը, կկատարվեին նախորդ տարվա համամասնություններով:

Առաջիկա ֆինանսական տարվա բյուջեի մշակման հետ մեկտեղ կատարվում է ընթացիկ տարվա բյուջեի կատարման մոնիտորինգը: Բյուջեի կատարման գնահատումը և վերլուծությունը կարևոր են հաջորդ տարվա բյուջեի մշակման համար, քանի որ արդյունքում բացահայտվում են ընթացիկ տարվա միտումները եկամուտների և ծախսերի բնագավառում: Այսպիսով, բյուջեն հաստատելուց հետո ֆինանսական տարվա ընթացքում պատրաստվում են բյուջեի կատարման ամսական, եռամսյակային, կիսամյա և տարեկան հաշվետվությունները:

Պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը Ազգային ժողովի կողմից

Պետական բյուջեի նախագծի քննարկումը Ազգային ժողովում իրականացվում է “Աժ կանոնակարգ” օրենքով սահմանված կարգով, ըստ որի կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարրին սկսվելուց առնվազն 60 օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը:

Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին իրենց առաջարկությունները պատգամավորները, պատգամավորական խմբերը և մշտական հանձնաժողովներն ներկայացնում են կառավարություն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով: Կառավարությունը խմբագրված բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում՝ կցելով ըստ հոդվածների հաջորդականության խմբագրված առաջարկությունների ամփոփաթերթիկը:

Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումն Ազգային ժողովի լիազումար նիստում սկսվում է ոչ ուշ, քան բյուջետային տարվան նախորդող դեկտեմբեր ամսվա առաջին եռօրյա նիստում: Նախագծի ներկայացման համար կառավարությունը կարող է հանդես գալ երեք զեկուցմամբ՝ մինչև 90 րոպե ընդհանուր տևողությամբ: Զեկուցողները ներկայացնում են նաև նախնական քննարկումների արդյունքով նախագծում կատարված փոփոխությունները:

Մինչև 30-ական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով հանդես են գալիս՝

ա) Կենտրոնական բանկի նախագահը՝ ներկայացնելով դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները:

բ) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը:

գ) պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինականության և հիմնավորվածության մասին հանձնաժողովի եզրակացությունը:

դ) ըստ ցանկության՝ մյուս մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

Մտքերի փոխանակման ժամանակ ամբիոնը կարող է տրամադրվել խմբակցությունների և պատգամավորական խմբերի ներկայացուցիչներին, վարչապետի ներկայացմամբ կառավարության անդամներին, Երևանի քաղաքապետին և մարզպետներին: Մտքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի եզրափակիչ ելույթով: Մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո հայտարարվում է բյուջեի նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 4 օրով: Բյուջեի նախագծի քննարկումը ընդմիջելուց հետո պատգամավորները իրենց առաջարկությունները պաշտոնապես, Աժ աշխատակազմի միջոցով, 24 ժամվա ընթացքում ներկայացնում են կառավարություն:

Բյուջեի օրենքի նախագծի քննարկումը վերսկսելուց առնվազն 24 ժամ առաջ կառավարությունը նախագծի վերջնական տարբերակը սահմանված կարգով կազմված ամփոփաթերթիկով ներկայացնում է Ազգային ժողով: Բյուջեի մասին օրենքի նախագծի վերսկսված քննարկումը ավարտվում է վարչապետի կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի ելույթով: Եթե բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տարբերակն ընդունելու մասին կառավարության առաջարկը քվեարկության արդյունքում չի ստանում անհրաժեշտ թվով ձայներ, ապա կառավարությունը կարող է բյուջեի հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը: Եթե կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում կամ նման որոշում չի ընդունվում, ապա բյուջեն, կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

Բյուջեի կատարման վերահսկումը

Կառավարությունը պատասխանատվություն է կրում պետական բյուջեի կատարման համար, տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են համայնքների բյուջեների կատարման համար: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մշակում է ֆինանսական կառավարման ընդհանուր ուղղությունները, որոնք ընդգրկում են նաև բյուջեի կատարման գործընթացը: Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի կատարման կազմակերպման պատասխանատվությունը կրում է պետական գանձապետարանը, որը մասն է կազմում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության: Գանձապետարանը իրականացնում է գործառնություններ պետական գումարների հետ, կատարում է ծախսող միավորների համար կանխիկ ռեսուրսների հետ կապված սպասարկումը, պահպանում է հաշվապահական հաշվառման գրանցումները և նախապատրաստում է պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները:

Գանձապետարանը տնօրինում է պետական ֆինանսական ռեսուրսները, հիմնական ծախսող միավորներին իրազեկ է պահում դրանց առկայության մասին և կատարում է վճարումները ըստ հաստատված բյուջեի հատկացումների:

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողովում քննարկվում և հաստատվում է Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին: Տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման գործընթացը նման է բյուջեի հաստատման գործընթացին: Եթե բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը չի ընդունվում, ապա կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե կառավարությանն անվստահության որոշում չի ընդունվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված:

Մասնագիտական տերմիններ

Բյուջե

Ֆինանսական տարվա ընթացքում կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ստեղծման և ծախսման պլան:

Բյուջեի դեֆիցիտ

Բյուջեի ծախսերի գերազանցումը բյուջեի եկամուտների նկատմամբ:

Բյուջեի հավելուրդ

Բյուջեի եկամուտների գերազանցումը ծախսերին

Բյուջետային գործընթաց

Բյուջեի նախագծի մշակման, քննարկման, հաստատման, հաստատված բյուջեի կատարման և վերջինիս վերաբերյալ հաշվետվության կազմման ու հաստատման օրենքներով սահմանված ընթացակարգ:

Բյուջետային դասակարգում

Բյուջեի մուտքերի և ելքերի համակարգված խմբավորումը հիմնված այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսին են, օրինակ, ծախսերի տնտեսագիտական բնույթը, գործառական առանձնահատկությունները, գերատեսչական կառուցվածքը և այլ բնութագրերը:

Բյուջետային եկամուտներ

Բոլոր հարկային, ոչ հարկային և այլ եկամուտներ, որոնք հավաքագրվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Բյուջետային եկամուտները ներառում են նաև պաշտոնական և այլ տրանսֆերտները (նվիրատվությունները):

Բյուջետային ծախսեր

Ռեսուրսներ, որոնք հատկացվում են ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:

Բյուջետային ֆինանսավորման հայտ

Ծախսող միավորների կողմից պատրաստվող փաստաթուղթ, որը պարունակում է առաջարկություններ և համապատասխան հիմնավորումներ առաջիկա տարում տվյալ միավորի գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ բյուջետային ռեսուրսների վերաբերյալ:

Բյուջետային հատկացումներ

Բյուջեի մասին օրենքով՝ ծախսող միավորներին տրված լիազորությունները որոշակի չափով ծախսեր կատարելու համար:

Բյուջետային տարի

Բյուջետային տարին համընկնում է օրացույցային տարվա հետ: Այն սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Ջուտ ներկա արժեք

Շարունակելի ծախսերի զուտ ներկա արժեքը՝ գումարն է այդ ծախսերի ընթացիկ և զեղչված ապագա արժեքի: Ապագա արժեքը զեղչվում է հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողի ներկայիս գինը ավելին է, քան նույնը ապագայում, քանի որ ժամանակի ընթացքում նույն փողը կստեղծի որոշակի տոկոսային գումարներ:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)

ՀՆԱ-ն երկրի տնտեսության ստանդարտ չափանիշ է: Այն ապրանքների և ծառայությունների գումարն է, որը ստեղծված է երկրում որոշակի ժամանակամիջոցում (սովորաբար մեկ տարի):

Համախմբված բյուջե

Համախմբված բյուջեն ներառում է պետական և համայնքների բյուջեները և պետական սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն:

Ծախսող միավորներ

Միավորներ, որոնք համաձայն բյուջեի մասին օրենքի իրավունք են ստանում բյուջետային ռեսուրսներ ծախսելու:

Պետական պարտք

Կառավարության և կենտրոնական բանկի ընդհանուր պարտավորությունները, ներառյալ պարտավորությունները գոյացող երաշխիքներից, օրենսդրությունից և հանաձայնագրերից: